



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 1567-Ա

«7» հոկտեմբերի 2024 թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔ (ՀԱՎԱՍՏԱԳԻՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թ. մայիսի 18-ի թիվ 395-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու քննության կազմակերպման, անցկացման, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագիր) դադարեցման» կարգի 10-րդ և 11-րդ կետերը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագիր) ստանալու համար քննությունների կազմակերպման և անցկացման նախապատրաստական աշխատանքները կազմակերպելու նպատակով.

1) Նախարարության անձնակազմի կառավարման վարչությանը՝ 2024 թ. հոկտեմբերի 8-ից հոկտեմբերի 21-ը ներառյալ՝ քսանչորսժամյա ռեժիմով ընդունել հավակնորդների փաստաթղթերն առցանց՝ <https://schoolexams.emis.am/> հղումով:

2) Մինչև 2024 թ. նոյեմբերի 5-ը նախարարի հաստատմանը ներկայացնել հավաստագրման ժամանակացույցը:

2. Նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը՝ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու համար հավակնորդների փաստաթղթերի ընդունման մասին հայտարարության տեքստը տեղադրել նախարարության պաշտոնական կայքում:

3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝

Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ